ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք,
Հեռ. (+374)10570830, (+374)10554057 էլ. հասցե hasarakakan.kartsiq@gmail.com

# *«Սոցիալական երևույթների հանդեպ երիտասարդների դիրքորոշման և այդ դիրքորոշումը պայմանավորող գործոնների ուսումնասիրություն. մեդիայի ազդեցությունը այդ գործոնների ձևավորման վրա»*

## հետազոտության արդյունքների վերլուծություն

Երևան 2018

# Բովանդակություն

Ամփոփագիր....3
Հետազոտության մեթոդաբանություն....4
Հետազոտության նպատակը....4
Հետազոտության մեթոդը....4
Հետազոտության ընտրանքը....4
Հարցվողների սոցիալ-դեմոգրաֆիական նկարագիրը....6
Հետազոտության արդյունքներ....8
Երիտասարդության արժեքային համակարգի նկարագիրը....8
Արժեքներ-ոչ արժեքներ. երիտասարդների տարաբաժանումը....8
Արժեքների զույգեր և նախընտրելի արժեքներ....16
Սոցիալական դիստանցիայի չափում....24
Սոցիալական խմբերի ներկայացվածությունը մեդիատեսակներում....24
Սոցիալական հարաբերությունների պատրաստակամությունը տարբեր սոցիալական խմբերի հանդեպ....33
Եզրակացություն....36

## Ամփոփագիր

«Սոցիալական երևույթների հանդեպ երիտասարդների դիրքորոշման և այդ դիրքորոշումը պայմանավորող գործոնների ուսումնասիրություն. մեդիայի ազդեցությունը այդ գործոնների ձևավորման վրա» հետազոտությունը Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն»-ի կողմից 2018 թ.-ի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացված ուսումնասիրություն է, որը նպատակ ունի չափել հայաստանյան բուհերի ուսանողների շրջանում սոցիալական տարբեր երևույթների հանդեպ դիրքորոշումը։ Ուսումնասիրության շրջանակներում շեշտը դրվել է նաև ուսանողների արժեքային համակարգի նկարագրի պարզաբանմանը։

13 պետական և միջպետական բուհերի ուսանողների շրջանում արված քանակական դեմ առ դեմ հարցումների միջոցով ստացված տվյալները հնարավորություն են տալիս նաև հասկանալ, թե ինչ ձևով են միմյանց հետ կապված սոցիալական երևույթների հանդեպ դիրքորոշումը և մեդիայից օգտվելու հաճախականությունը։ Հետազոտության շրջանակներում կիրառվել են Բոգարդուսի սոցիալական դիստանցիայի սանդղակը, զույգերի համեմատման մեթոդը և այլ տեխնիկաներ։

Վերլուծության սկզբնամասում շարադրված են հետազոտության մեթոդաբանությունը և հարցվողների սոցիալ-դեմոգրաֆիական նկարագիրը։ Այնուհետև ներկայացված է բուն վերլուծական հատվածը՝ ուսանողների արժեքային համակարգի նկարագիրը, սոցիալական հարաբերությունների պատրաստակամությունը տարբեր սոցիալական խմբերի հանդեպ և մեդիայում սոցիալական տարբեր խմբերի ներկայացվածությունը։

# Հետազոտության մեթոդաբանություն

## Հետազոտության նպատակը

Հետազոտությունը նպատակ ունի պարզել սոցիալական երևույթների հանդեպ ուսանողների դիրքորոշումը՝ շեշտը դնելով մի քանի հիմնական խնդիրների վրա՝

- Դուրսբերել ուսանողների արժեքային համակարգի նկարագիրը
- Պարզել սոցիալական հարաբերությունների պատրաստակամությունը տարբեր սոցիալական խմբերի հանդեպ
- Պարզել մեդիայում տարբեր սոցիալական խմբերի ներկայացվածությունը

## Հետազոտության մեթոդը

Հետազոտության շրջանակներում կիրառվել է քանակական դեմ առ դեմ հարցման մեթոդը: Հարցաթերթում ներառվել են նաև այնպիսի տեխնիկաներ, ինչպիսիք են Բոգարդուսի հարաբերությունների սանդղակը, զույգերի համեմատման մեթոդը և այլն:

## Հետազոտության ընտրանքը

Հետազոտության շրջանակներում իրականացվել է բազմաստիճան շերտավորված ընտրանք, որի համար որպես գլխավոր համախմբություն առաջին շերտում վերցվել են ՀՀ բոլոր պետական և միջպետական բուհերի ուսանողները (80010): Երկրորդ շերտում ընտրվել են առավել շատ և առավել քիչ ուսանողներ ունեցող բուհերը՝ ապահովելով նաև մարզային ներկայացվածություն (50803): Ընտրանքային համախմբության մեջ ընդգրկված 773 ուսանողները ներկայացնում են հետևյալ կրթական հաստատությունները՝ Երևանի պետական համալսարան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալաասարան, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Գեղարվեստի պետական ակադեմիա, Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, Եվրոպական համալսարան, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղ, Գավառի պետական համալսարան:

Ընտրանքում ներառվել են նշված բուհերի բոլոր ֆակուլտետների և բոլոր կուրսերի ուսանողները՝ ապահովելով ներկայացուցչականություն և հնարավորություն տալով ամենատարբեր մասնագիտությունների տեր ուսանողների մասնակցել հարցմանը: Արդյունքում ուսանողներին կարելի է խմբավորել հետևյալ մասնագիտական ուղղություններում.




Ինչ վերաբերում է հարցվողների կուրսերին, ապա պատկերը հետևյալն է.

| | |
|---|---|
| Բակալավրիատ 1-ին կուրս | 15.3 |
| Բակալավրիատ 2-րդ կուրս | 18.9 |
| Բակալավրիատ 3-րդ կուրս | 19.7 |
| Բակալավրիատ 4-րդ կուրս | 18.9 |
| Մագիստրատուրա 1-ին կուրս | 14.0 |
| Մագիստրատուրա 2-րդ կուրս | 12.7 |
| Այլ | 0.5 |

Այլ կատեգորիայում են ընդգրկված հեռակա ուսուցման կամ բուհից յուրահատկությունից ելնելով 5-րդ կուրսի ուսանողները:




## Հարցվողների սոցիալ-դեմոգրաֆիական նկարագիրը

Նախքան հետազոտական բուն արդյունքներին անդրադառնալը, հետաքրքիր է նախ տեսնել հարցվողների սոցիալ-դեմոգրաֆիական տվյալները և վերլուծության ժամանակ կիրառել այն՝ առանձին չափումներում դրանց հետ կապեր տեսնելու համար:

Ինչ վերաբերում է հարցվողների սեռային բաշխմանը, ապա ընտրանքում ընդգրկված են 41% արական և 59% իգական սեռի ներկայացուցիչներ:



,

Հարցվողների տարիքային նկարագիրը հիմնականում տատանվում է 17-25-ի մեջ (հարցվողների 95.3%-ը այս տարիքային խմբում է): Մնացյալ 3.9%-ը (0.8%-ը հրաժարվել է նշել իր տարիքը) ավելի մեծ տարիքի է. կան 26-ից բարձր տարիքի հարցվողներ, իսկ ամենամեծ տարիքով հարցվողը 39 տարեկան է:

Հարցվողների բնակության վայրը ընդգրկում է ամբողջ Հայաստանի տարածքը՝ հաշվի առնելով, որ հարցումներն իրականացվել են 5 մարզերում, իսկ Երևանին մոտ գտնվող մարզերի ուսանողները շարունակում են բնակություն հաստատել այդտեղ՝ ամեն օր գալով և վերադառնալով:




Ինչ վերաբերում է հարցվողների ծննդավայրին, ապա այն ընդգրկում է նաև Արցախը, ինչպես նաև Հայաստանից դուրս երկրներ, որոնք կոդավորել են «Այլ» տարբերակի ներքո:



# Հետազոտության արդյունքներ

## Երիտասարդության արժեքային համակարգի նկարագիրը

### Արժեքներ-ոչ արժեքներ. երիտասարդների տարաբաժանումը

Հետազոտության շրջանակներում երիտասարդներին առաջարկվել են մի շարք գաղափարներ, որոնցից նրանք ընտրել են ինչն է իրենց համար արժեք, իսկ ինչը՝ ոչ: Արդյունքները այսպիսինն են՝

*Արդարություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 98.6 |
| Ոչ, արժեք չէ | 1.4 |

*Հավատք, կրոն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 78.3 |
| Ոչ, արժեք չէ | 21.7 |

*Նյութական բարեկեցություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 45.8 |
| Ոչ, արժեք չէ | 54.2 |

*Ազնվություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 98.3 |
| Ոչ, արժեք չէ | 1.7 |

*Պատասխանատվություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 93.8 |
| Ոչ, արժեք չէ | 6.2 |

*Գենդերային հավասարություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 51.9 |

| | |
|---|---|
| Ոչ, արժեք չէ | 48.1 |

*Սոցիալական հավասարություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 62.2 |
| Ոչ, արժեք չէ | 37.8 |

*Ավանդապաշտություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 43.9 |
| Ոչ, արժեք չէ | 56.1 |

*Բանակ*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 88.4 |
| Ոչ, արժեք չէ | 11.6 |

*Հայրենիք*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 93.5 |
| Ոչ, արժեք չէ | 6.5 |

*Դիպլոմ*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 34.8 |
| Ոչ, արժեք չէ | 65.2 |

*Հանդուրժողականություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 81.9 |
| Ոչ, արժեք չէ | 18.1 |

*Մարդու իրավունքներ*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 95.9 |
| Ոչ, արժեք չէ | 4.1 |

*Նպատակասլացություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 89.0 |
| Ոչ, արժեք չէ | 11.0 |

*Համայնքին պատկանելություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 30.1 |
| Ոչ, արժեք չէ | 69.9 |

*Կրթություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 84.5 |
| Ոչ, արժեք չէ | 15.5 |

*Ինդիվիդուալիզմ*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 79.2 |
| Ոչ, արժեք չէ | 20.8 |

*Կուսակցական պատկանելություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 7.5 |
| Ոչ, արժեք չէ | 92.5 |

*Գրագիտություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 86.0 |
| Ոչ, արժեք չէ | 14.0 |

*Պատմություն*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 77.1 |
| Ոչ, արժեք չէ | 22.9 |

*Հարազատներ*

| | |
|---|---|
| Այո, արժեք է | 95.1 |
| Ոչ, արժեք չէ | 4.9 |

Բոլոր գաղափարների՝ ընդհանրացված պատկերը ներկայացված է ստորև՝




Արդյունքում ամենաշատը արժեք են համարվել «արդարություն», «ազնվություն» և «մարդու իրավունքներ» տարբերակները: Մնացյալ գաղափարները՝ ըստ արժեք համարվելու նվազման կարգի՝ ստորև աղյուսակում՝

| | | |
|---|---|---|
| Արդարություն | 98.6 | 1.4 |
| Ազնվություն | 98.3 | 1.7 |
| Մարդու իրավունքներ | 95.9 | 4.1 |
| Հարազատներ | 95.1 | 4.9 |
| Պատասխանատվություն | 93.8 | 6.2 |
| Հայրենիք | 93.5 | 6.5 |
| Նպատակասլացություն | 89.0 | 11.0 |
| Բանակ | 88.4 | 11.6 |
| Գրագիտություն | 86.0 | 14.0 |
| Կրթություն | 84.5 | 15.5 |
| Հանդուրժողականություն | 81.9 | 18.1 |
| Ինդիվիդուալիզմ | 79.2 | 20.8 |
| Հավատք, կրոն | 78.3 | 21.7 |
| Պատմություն | 77.1 | 22.9 |
| Սոցիալական հավասարություն | 62.2 | 37.8 |
| Գենդերային հավասարություն | 51.9 | 48.1 |

| | | |
|---|---|---|
| Նյութական բարեկեցություն | 45.8 | 54.2 |
| Ավանդապաշտություն | 43.9 | 56.1 |
| Դիպլոմ | 34.8 | 65.2 |
| Համայնքին պատկանելություն | 30.1 | 69.9 |
| Կուսակցական պատկանելություն | 7.5 | 92.5 |

Եթե նախորդ պարագայում առաջին եռյակը ձևավորվել էր ամեն գաղափարի համար ռեսպոնդենտին հարցնելու արդյունքում, թե ըստ իրեն արժեք է, թե ոչ այս կամ այն գաղափարը, ապա դրանից զատ նաև ռեսպոնդնետները առանձացրել են 3 առաջնահերթ արժեքները իրենց համար: Այս պարագայում առաջին եռյակում են «ազնվություն», «արդարություն», «հարազատներ» պատասխանները: Հետաքրքիր է, որ «մարդու իրավունքներ»-ը, չնայած նրան, որ շատ մեծ քանակությամբ ռեսպոնդենտների մոտ արժեք է, նրանք այն առաջնահերթ արժեքների շարքում համեմատաբար քիչ են դասել, իսկ գրեթե նույնաքանակ «հարազատներ» նշողների շատ մեծ մասին համար այն առաջնահերթ արժեք է:

| | |
|---|---|
| Արդարություն | 13.7 |
| Հավատք, կրոն | 4.6 |
| Նյութական բարեկեցություն | 1.9 |
| Ազնվություն | 14.8 |
| Պատասխանատվություն | 5.3 |
| Գենդերային հավասարություն | 0.6 |
| Սոցիալական հավասարություն | 1.0 |
| Ավանդապաշտություն | 1.3 |
| Բանակ | 3.9 |
| Հայրենիք | 9.6 |
| Դիպլոմ | 0.4 |
| Հանդուրժողականություն | 3.1 |
| Մարդու իրավունքներ | 5.6 |
| Նպատակասլացություն | 5.2 |
| Կրթություն | 5.0 |
| Ինդիվիդուալիզմ | 3.9 |
| Կուսակցական պատկանելություն | 0.2 |
| Գրագիտություն | 1.9 |
| Պատմություն | 1.0 |
| Հարազատներ | 11.7 |
| ԴՊ | 5.2 |
| Ընդհանուր | 100.0 |

Դիտարկենք նաև արժեքների առաջնահերթությունները՝ ըստ մասնագիտական ոլորտների՝

| | Բժշկություն | Ճշգրիտ գիտություններ | Բնագիտություն | Արվեստ | Հասարակա-գիտություն | Հումանիտար գիտություններ | Մանկավար-ժություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| Արդարություն | **13.7** | **17.8** | **12.6** | **13.7** | **13.1** | **13.9** | **11.7** |
| Հավատք, կրոն | 3.7 | 2.6 | 3.1 | 6.8 | 5.1 | 4.9 | 4.9 |
| Նյութական բարեկեցություն | 3.0 | 2.2 | 2.0 | 0.9 | 2.4 | 1.0 | 0.6 |
| Ազնվություն | **18.5** | **15.2** | **15.7** | **10.5** | **13.1** | **17.4** | **14.8** |
| Պատասխանատվություն | 3.7 | **7.4** | 3.5 | **7.3** | 5.6 | 5.6 | 3.7 |
| Գենդերային հավասարություն | 0.0 | 0.0 | 0.8 | 0.9 | 0.9 | 0.8 | 0.6 |
| Սոցիալական հավասարություն | 0.4 | 1.3 | 0.8 | 0.9 | 1.5 | 0.8 | 0.6 |
| Ավանդապաշտություն | 0.4 | 1.3 | 1.6 | 0.0 | 1.8 | 1.3 | 1.9 |
| Բանակ | 2.2 | 3.0 | 2.7 | 2.7 | **5.7** | 3.6 | 3.7 |
| Հայրենիք | 3.7 | **7.8** | **11.8** | **8.2** | **12.4** | **9.2** | **8.0** |
| Դիպլոմ | 0.4 | 0.0 | 0.8 | 0.5 | 0.3 | 1.0 | 0.0 |
| Հանդուրժողականություն | 4.4 | 3.0 | 2.7 | 3.2 | 2.8 | 3.1 | 3.1 |
| Մարդու իրավունքներ | **7.4** | 6.1 | **5.5** | 5.5 | 5.1 | 5.1 | **5.6** |
| Նպատակասլացություն | 5.2 | 5.6 | 3.9 | 4.1 | 5.1 | **6.9** | 4.3 |
| Կրթություն | **6.7** | 5.2 | 4.3 | 5.0 | 5.1 | 5.1 | 3.1 |
| Ինդիվիդուալիզմ | 4.8 | 3.0 | 3.9 | 3.7 | 4.0 | 4.4 | 2.5 |
| Կուսակցական պատկանելություն | 0.4 | 0.4 | 0.4 | 0.5 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Գրագիտություն | 3.0 | 2.6 | 0.8 | 1.4 | 1.6 | 3.1 | 0.0 |
| Պատմություն | 0.7 | 0.4 | 0.0 | 1.8 | 1.5 | 0.3 | 1.9 |
| Հարազատներ | **13.3** | **12.1** | **12.5** | **11.0** | **11.5** | **11.0** | **10.5** |
| ԴՊ | 4.4 | 3.0 | 10.6 | 11.4 | 1.6 | 1.5 | 18.5 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

Աղյուսակում առանձնացված են յուրաքանչյուր մասնագիտական ոլորտի համար առավելագույն 5 արժեքները՝ գունավորված ըստ հերթականության:

Առանձնացված են նաև առաջնահերթ արժեքները՝ ըստ սեռի՝ կրկին գունավորված ըստ հերթականության՝

| | Արական | Իգական |
|---|---|---|
| Արդարություն | 13.7 | 13.7 |
| Հավատք, կրոն | 4.5 | 4.6 |
| Նյութական բարեկեցություն | 2.7 | 1.3 |
| Ազնվություն | 14.6 | 15.0 |
| Պատասխանատվություն | 6.2 | 4.8 |
| Գենդերային հավասարություն | 0.4 | 0.8 |
| Սոցիալական հավասարություն | 1.5 | 0.7 |
| Ավանդապաշտություն | 1.3 | 1.3 |
| Բանակ | 3.9 | 3.9 |
| Հայրենիք | 11.4 | 8.4 |
| Դիպլոմ | 0.5 | 0.4 |
| Հանդուրժողականություն | 2.0 | 3.9 |
| Մարդու իրավունքներ | 5.4 | 5.7 |
| Նպատակասլացություն | 5.2 | 5.2 |
| Կրթություն | 4.8 | 5.2 |
| Ինդիվիդուալիզմ | 3.7 | 4.1 |
| Կուսակցական պատկանելություն | 0.3 | 0.1 |
| Գրագիտություն | 1.3 | 2.3 |
| Պատմություն | 1.5 | 0.7 |
| Հարազատներ | 10.5 | 12.3 |
| ԴՊ | 4.6 | 5.6 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 |

Իսկ առաջնահերթ արժեքները՝ ըստ մարզերի, ունի հետևյալ տեսքը՝

| | Երևան | Արագածոտն | Արարատ | Արմավիր | Կոտայք | Շիրակ | Տավուշ | Գեղարքունիք | Լոռի | Սյունիք | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արդարություն | 14.0 | 12.9 | 10.8 | 12.8 | 11.6 | 15.1 | 12.3 | 16.7 | 14.6 | 18.8 | 4.2 |
| Հավատք, կրոն | 3.6 | 4.3 | 3.9 | 2.6 | 5.3 | 9.5 | 10.5 | 9.1 | 5.2 | 10.4 | 4.2 |
| Նյութական բարեկեցություն | 1.9 | 1.1 | 0.0 | 1.7 | 0.5 | 0.8 | 1.8 | 3.0 | 3.1 | 12.5 | 4.2 |
| Ազնվություն | 15.0 | 15.1 | 12.7 | 15.4 | 13.8 | 18.3 | 10.5 | 12.1 | 13.5 | 20.8 | 12.5 |
| Պատասխանատվություն | 4.7 | 6.5 | 5.9 | 6.0 | 4.2 | 4.8 | 10.5 | 7.6 | 7.3 | 12.5 | 4.2 |
| Գենդերային հավասարություն | 0.6 | 1.1 | 1.0 | 0.9 | 0.0 | 1.6 | 0.0 | 0.0 | 0.0 | 2.1 | 0.0 |
| Սոցիալական հավասարություն | 1.1 | 0.0 | 1.0 | 0.0 | 1.1 | 0.8 | 0.0 | 0.0 | 2.1 | 4.2 | 0.0 |
| Ավանդապաշտություն | 1.2 | 1.1 | 2.0 | 0.9 | 0.5 | 1.6 | 0.0 | 0.0 | 3.1 | 4.2 | 4.2 |
| Բանակ | 3.4 | 3.2 | 5.9 | 6.0 | 5.3 | 4.8 | 3.5 | 4.5 | 5.2 | 0.0 | 4.2 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայրենիք | **8.6** | **15.1** | **11.8** | **9.4** | **13.8** | **11.1** | **12.3** | **9.1** | **8.3** | 4.2 | 8.3 |
| Դիպլոմ | 0.6 | 0.0 | 1.0 | 0.0 | 0.0 | 0.8 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Հանդուրժողականություն | 3.4 | 3.2 | 2.9 | 1.7 | 3.2 | 4.0 | 0.0 | 3.0 | 3.1 | 0.0 | 0.0 |
| Մարդու իրավունքներ | **5.9** | 4.3 | **7.8** | **6.0** | 5.3 | 4.0 | 8.8 | 0.0 | 3.1 | 4.2 | 8.3 |
| Նպատակասլացություն | 5.1 | **8.6** | 2.9 | **6.0** | **6.3** | 4.0 | 5.3 | 6.1 | 5.2 | 4.2 | 0.0 |
| Կրթություն | 5.0 | **9.7** | **7.8** | 4.3 | 3.7 | 4.8 | 5.3 | 4.5 | 4.2 | 0.0 | 8.3 |
| Ինդիվիդուալիզմ | 4.5 | 2.2 | 1.0 | 5.1 | 4.8 | 1.6 | 5.3 | 1.5 | 3.1 | 2.1 | 0.0 |
| Կուսակցական պատկանելություն | 0.2 | 0.0 | 1.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Գրագիտություն | 2.1 | 1.1 | 2.9 | 2.6 | 1.6 | 0.8 | 0.0 | 3.0 | 1.0 | 0.0 | 4.2 |
| Պատմություն | 0.9 | 0.0 | 1.0 | 0.9 | 1.1 | 0.8 | 0.0 | 1.5 | 3.1 | 0.0 | 4.2 |
| Հարազատներ | **12.5** | 7.5 | **9.8** | **12.8** | **10.1** | **8.7** | **14.0** | **13.6** | **13.5** | 0.0 | 16.7 |
| ԴՊ | 5.6 | 3.2 | 6.9 | 5.1 | 7.9 | 2.4 | 0.0 | 4.5 | 1.0 | 0.0 | 12.5 |
| Ընդհանուր | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |

## Արժեքների զույգեր և նախընտրելի արժեքներ

Հետազոտության շրջանակներում կիրառվել է զույգերի համեմատման մեթոդը, որի շրջանակներում հարցվողներին առաջարկվել են արժեքային զույգեր, որոնցից յուրաքանչյուրի համար կատարվել է ընտրություն։ Դիտարկենք յուրաքանչյուր արժեքի համեմատական պատկերը բոլոր մյուս արժեքների հետ։

| սեր | ազատություն |
|---|---|
| 51.5 | 48.5 |

| սեր | արժանապատվություն |
|---|---|
| 18.0 | 82.0 |

| սեր | աշխատանք |
|---|---|
| 62.9 | 37.1 |

| սեր | հարգանք |
|---|---|
| 24.7 | 75.3 |

| սեր | ընտանիք |
|---|---|
| 26.3 | 73.7 |

| սեր | ընկերություն |
|---|---|
| 50.1 | 49.9 |

Սերը ամենաշատը «ստորադասվել» է արժանապատվությանը, հարգանքին և ընտանիքին, գրեթե հավասար դիտարկվել ազատությանը և ընկերությանը, և կարևորվել աշխատանքից։




Ազատությունը «ստորադասվել» է արժանապատվությանը, հարգանքին, ընտանիքին և ընկերությանը, և գրեթե հավասար դիտարկվել սիրո և աշխատանքի հետ:

| ազատություն | սեր |
|---|---|
| 48.5 | 51.5 |

| ազատություն | արժանապատվություն |
|---|---|
| 24.8 | 75.2 |

| ազատություն | աշխատանք |
|---|---|
| 51.9 | 48.1 |

| ազատություն | հարգանք |
|---|---|
| 21.5 | 78.5 |

| ազատություն | ընտանիք |
|---|---|
| 14.2 | 85.8 |

| ազատություն | ընկերություն |
|---|---|
| 25.2 | 74.8 |




Արժանապատվությունը «հաղթել» է բոլոր արժեքներին, բացառությամբ ընտանիքի։

| արժանապատվություն | սեր |
|---|---|
| 82.0 | 18.0 |

| արժանապատվություն | ազատություն |
|---|---|
| 75.2 | 24.8 |

| արժանապատվություն | աշխատանք |
|---|---|
| 85.6 | 14.4 |

| արժանապատվություն | հարգանք |
|---|---|
| 55.6 | 44.4 |

| արժանապատվություն | ընտանիք |
|---|---|
| 25.6 | 74.4 |

| արժանապատվություն | ընկերություն |
|---|---|
| 56.9 | 43.1 |




Աշխատանքը «ստորադասվել» է բոլոր արժեքներին։

| աշխատանք | սեր |
| --- | --- |
| 37.1 | 62.9 |

| աշխատանք | ազատություն |
| --- | --- |
| 48.1 | 51.9 |

| աշխատանք | արժանապատվություն |
| --- | --- |
| 14.4 | 85.6 |

| աշխատանք | հարգանք |
| --- | --- |
| 21.9 | 78.1 |

| աշխատանք | ընտանիք |
| --- | --- |
| 11.5 | 88.5 |

| աշխատանք | ընկերություն |
| --- | --- |
| 28.7 | 71.3 |




Հարգանքը «ստորադասվել» է ընտանիքից, կարևորվել սիրուց, ազատությունից, աշխատանքից և գրեթե հավասար դիտարկվել ընկերությանը և արժանապատվությանը:

| հարգանք | սեր |
| --- | --- |
| 75.3 | 24.7 |

| հարգանք | ազատություն |
| --- | --- |
| 78.5 | 21.5 |

| հարգանք | արժանապատվություն |
| --- | --- |
| 44.4 | 55.6 |

| հարգանք | աշխատանք |
| --- | --- |
| 78.1 | 21.9 |

| հարգանք | ընտանիք |
| --- | --- |
| 25.0 | 75.0 |

| հարգանք | ընկերություն |
| --- | --- |
| 49.3 | 50.7 |




Ընտանիքը կարևորվել է բոլոր արժեքներից։

| ընտանիք | սեր |
|---|---|
| 73.7 | 26.3 |

| ընտանիք | ազատություն |
|---|---|
| 85.8 | 14.2 |

| ընտանիք | արժանապատվություն |
|---|---|
| 74.4 | 25.6 |

| ընտանիք | աշխատանք |
|---|---|
| 88.5 | 11.5 |

| ընտանիք | հարգանք |
|---|---|
| 75.0 | 25.0 |

| ընտանիք | ընկերություն |
|---|---|
| 91.5 | 8.5 |




Ընկերությունը «ստորադասվել» է միայն ընտանիքին, այն էլ հսկայական առավելությամբ, հավասարաչափ կարևորվել արժանապատվության, սիրո, հարգանքի հետ և կարևորվել ազատությունից և աշխատանքից։

| ընկերություն | սեր |
|---|---|
| 50.1 | 49.9 |

| ընկերություն | ազատություն |
|---|---|
| 74.8 | 25.2 |

| ընկերություն | արժանապատվություն |
|---|---|
| 43.1 | 56.9 |

| ընկերություն | աշխատանք |
|---|---|
| 71.3 | 28.7 |

| ընկերություն | հարգանք |
|---|---|
| 50.7 | 49.3 |

| ընկերություն | ընտանիք |
|---|---|
| 8.5 | 91.5 |




Զույգերի համեմատման մեթոդի էությունը նրանում է, որ բոլոր զույգերից նախընտրելին ունենալուն արդյունքում, թվաքանակները ներմուծվում են ընդհանուր աղյուսակում: Յուրաքանչյուր 2 արժեք ունի խաչման 2 վանդակ, և դրանցից յուրաքանչյուրը նապընտրած հարցվողների թիվը նշվում է այս արժեքների խաչման տիրույթի վանդակում այնպես, որ արժեքը նախընտրածների թիվը լինի համապատասխանող ուղղահայաց վանդակում:

| | Սեր | Ազատություն | Արժանա-պատվություն | Աշխատանք | Հարգանք | Ընտանիք | Ընկերու-թյուն |
|---|---|---|---|---|---|---|---|
| Սեր | | 375 | 634 | 287 | 582 | 570 | 386 |
| Ազատություն | 398 | | 581 | 372 | 607 | 663 | 578 |
| Արժանա-պատվություն | 139 | 192 | | 111 | 343 | 575 | 333 |
| Աշխատանք | 486 | 401 | 662 | | 604 | 684 | 551 |
| Հարգանք | 191 | 166 | 430 | 169 | | 580 | 392 |
| Ընտանիք | 203 | 110 | 198 | 89 | 193 | | 66 |
| Ընկերություն | 387 | 195 | 440 | 222 | 381 | 707 | |
| Ընդհանուր | 1804 | 1439 | 2945 | 1250 | 2710 | 3779 | 2306 |

Արդյունքում ամենանախընտրելի արժեքը ընտանիքն է, այնուհետև արժանապատվությունը, հարգանքը, ընկերությունը, սերը, ազատությունը և վերջին տեղում՝ աշխատանքը:

## Սոցիալական դիստանցիայի չափում

### Սոցիալական խմբերի ներկայացվածությունը մեդիատեսակներում

Ուսանողները նաև նշել են, թե ըստ իրենց տարբեր սոցիալական խմբերը ինչպես են ներկայացված մեդիատեսակներում՝ հեռուստատեսությամբ, առցանց մամուլով, թերթերում և ռադիոյով:

- Ռուս

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 47.9 | 32.6 | 3.6 | 11.3 | 2.3 | 2.3 |
| Առցանց մամուլ | 49.7 | 26.5 | 10.1 | 10.2 | 2.1 | 1.3 |
| Թերթ | 39.0 | 24.1 | 8.5 | 13.5 | 5.0 | 9.9 |
| Ռադիո | 34.0 | 24.4 | 2.9 | 16.4 | 5.0 | 17.2 |

- Եվրոպացի

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 36.6 | 40.3 | 6.3 | 11.5 | 2.5 | 2.9 |
| Առցանց մամուլ | 38.0 | 40.3 | 6.4 | 12.2 | 1.6 | 1.4 |
| Թերթ | 34.0 | 31.9 | 7.1 | 14.2 | 2.1 | 10.6 |
| Ռադիո | 31.9 | 29.8 | 4.6 | 13.4 | 2.5 | 17.6 |

- Ամերիկացի

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 35.5 | 30.5 | 10.3 | 16.0 | 4.2 | 3.4 |
| Առցանց մամուլ | 34.7 | 32.2 | 10.6 | 16.4 | 4.5 | 1.6 |
| Թերթ | 31.9 | 26.2 | 6.4 | 19.1 | 4.3 | 12.1 |
| Ռադիո | 30.3 | 24.8 | 5.9 | 16.4 | 5.5 | 17.2 |

- Սլավոնական ազգի ներկայացուցիչ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 27.1 | 19.8 | 4.6 | 26.9 | 14.5 | 7.1 |
| Առցանց մամուլ | 29.4 | 17.2 | 5.5 | 28.5 | 14.2 | 5.1 |
| Թերթ | 29.8 | 17.0 | 2.1 | 27.0 | 12.1 | 12.1 |
| Ռադիո | 24.4 | 15.1 | 3.4 | 24.8 | 13.0 | 19.3 |

- Քուրդ/եզդի

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 15.3 | 16.6 | 12.0 | 22.9 | 26.0 | 7.3 |
| Առցանց մամուլ | 16.4 | 14.3 | 11.8 | 23.3 | 27.7 | 6.4 |
| Թերթ | 19.9 | 14.9 | 8.5 | 19.1 | 19.9 | 17.7 |
| Ռադիո | 14.7 | 16.4 | 7.6 | 18.5 | 21.8 | 21.0 |

- Ասիացի

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 24.8 | 25.2 | 3.4 | 24.4 | 16.0 | 6.1 |
| Առցանց մամուլ | 24.8 | 24.8 | 3.4 | 26.5 | 16.2 | 4.2 |
| Թերթ | 27.0 | 19.1 | 3.5 | 22.0 | 14.2 | 14.2 |
| Ռադիո | 20.2 | 21.4 | 3.4 | 19.7 | 16.8 | 18.5 |

- Վրացի

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 32.3 | 35.9 | 7.1 | 15.6 | 5.7 | 3.4 |
| Առցանց մամուլ | 32.1 | 35.1 | 7.8 | 17.0 | 6.3 | 1.8 |
| Թերթ | 30.5 | 25.5 | 7.8 | 19.9 | 5.0 | 11.3 |
| Ռադիո | 23.9 | 27.7 | 7.6 | 20.2 | 5.9 | 14.7 |

- Մոլոկան

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 9.0 | 11.3 | 6.7 | 20.0 | 42.4 | 10.7 |
| Առցանց մամուլ | 9.3 | 12.6 | 6.7 | 20.8 | 41.0 | 9.6 |
| Թերթ | 11.3 | 14.2 | 5.0 | 18.4 | 33.3 | 17.7 |
| Ռադիո | 10.1 | 11.8 | 4.6 | 16.8 | 34.0 | 22.7 |

- Աղրբեջանցի

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 5.3 | 1.3 | 81.9 | 5.2 | 3.6 | 2.7 |
| Առցանց մամուլ | 6.6 | 2.0 | 80.3 | 6.2 | 3.8 | 1.2 |
| Թերթ | 5.7 | 0.7 | 70.9 | 10.6 | 2.8 | 9.2 |
| Ռադիո | 5.9 | 0.8 | 66.8 | 8.4 | 4.6 | 13.4 |

- Թուրք

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 9.0 | 1.5 | 74.4 | 9.0 | 3.2 | 2.9 |
| Առցանց մամուլ | 11.2 | 2.0 | 72.9 | 9.1 | 3.5 | 1.3 |
| Թերթ | 11.3 | 1.4 | 60.3 | 12.8 | 2.8 | 11.3 |
| Ռադիո | 12.2 | 1.3 | 58.0 | 10.9 | 3.4 | 14.3 |

- Պարսիկ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 33.8 | 13.9 | 20.6 | 21.9 | 5.5 | 4.2 |
| Առցանց մամուլ | 30.7 | 12.9 | 26.9 | 21.8 | 5.0 | 2.6 |
| Թերթ | 35.5 | 9.9 | 15.6 | 19.9 | 8.5 | 10.6 |
| Ռադիո | 27.7 | 14.3 | 17.2 | 20.2 | 5.0 | 15.5 |

- Սփյուռքահայ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 17.0 | 74.2 | 0.8 | 3.8 | 1.5 | 2.7 |
| Առցանց մամուլ | 18.7 | 71.6 | 2.0 | 4.3 | 1.8 | 1.6 |
| Թերթ | 16.3 | 66.7 | 1.4 | 4.3 | 1.4 | 9.9 |
| Ռադիո | 17.2 | 61.3 | 2.1 | 4.2 | 1.7 | 13.4 |

- Սևամորթ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 27.3 | 23.5 | 5.3 | 28.6 | 11.1 | 4.2 |
| Առցանց մամուլ | 28.9 | 23.4 | 5.9 | 29.4 | 9.1 | 3.3 |
| Թերթ | 21.3 | 20.6 | 3.5 | 27.7 | 14.9 | 12.1 |
| Ռադիո | 23.5 | 18.1 | 3.8 | 24.4 | 12.6 | 17.6 |

- Մահմեդական

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 21.4 | 6.5 | 34.5 | 24.0 | 8.2 | 5.3 |
| Առցանց մամուլ | 21.6 | 7.1 | 36.5 | 23.8 | 7.4 | 3.7 |
| Թերթ | 25.5 | 4.3 | 26.2 | 27.0 | 6.4 | 10.6 |
| Ռադիո | 19.7 | 5.5 | 28.2 | 21.8 | 7.1 | 17.6 |

- Քրիստոնեության այլ ուղղության հետևորդ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 27.3 | 26.7 | 15.1 | 22.3 | 5.2 | 3.4 |
| Առցանց մամուլ | 27.7 | 24.2 | 18.5 | 21.6 | 5.0 | 3.0 |
| Թերթ | 24.8 | 25.5 | 15.6 | 19.9 | 3.5 | 10.6 |
| Ռադիո | 22.7 | 22.7 | 11.8 | 20.2 | 5.5 | 17.2 |

- Աղանդավոր

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 6.9 | 1.7 | 69.1 | 10.3 | 7.4 | 4.6 |
| Առցանց մամուլ | 6.3 | 2.0 | 71.0 | 10.8 | 6.4 | 3.5 |
| Թերթ | 7.8 | 1.4 | 64.5 | 10.6 | 5.0 | 10.6 |
| Ռադիո | 5.0 | 0.4 | 62.2 | 9.7 | 7.6 | 15.1 |

- Աթեիստ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 16.2 | 2.7 | 36.5 | 27.7 | 11.6 | 5.3 |
| Առցանց մամուլ | 19.2 | 4.3 | 37.8 | 25.8 | 9.1 | 3.8 |
| Թերթ | 19.9 | 2.8 | 27.0 | 24.8 | 13.5 | 12.1 |
| Ռադիո | 17.6 | 2.9 | 28.2 | 25.6 | 9.7 | 16.0 |

- Թմրամոլ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 2.3 | 1.3 | 82.4 | 5.5 | 4.8 | 3.6 |
| Առցանց մամուլ | 3.9 | 1.4 | 82.3 | 5.8 | 4.2 | 2.4 |
| Թերթ | 1.4 | 0.0 | 78.7 | 5.0 | 5.0 | 9.9 |
| Ռադիո | 1.7 | 0.8 | 73.1 | 4.2 | 5.9 | 14.3 |

- Խաղամոլ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 4.2 | 1.1 | 80.0 | 4.8 | 5.9 | 4.0 |
| Առցանց մամուլ | 4.6 | 1.7 | 80.4 | 5.3 | 5.8 | 2.2 |
| Թերթ | 0.7 | 0.7 | 77.3 | 4.3 | 7.1 | 9.9 |
| Ռադիո | 2.9 | 1.3 | 70.6 | 5.5 | 6.3 | 13.4 |

- Հանցագործ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 5.2 | 1.7 | 82.6 | 4.0 | 3.1 | 3.4 |
| Առցանց մամուլ | 4.9 | 2.0 | 84.1 | 4.1 | 3.2 | 1.8 |
| Թերթ | 5.0 | 0.7 | 76.6 | 5.0 | 2.8 | 9.9 |
| Ռադիո | 4.2 | 0.8 | 73.1 | 4.2 | 2.9 | 14.7 |

- Մարմնավաճառ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 4.8 | 1.1 | 80.5 | 4.4 | 5.0 | 4.2 |
| Առցանց մամուլ | 4.9 | 1.7 | 82.9 | 4.3 | 3.5 | 2.6 |
| Թերթ | 1.4 | 2.8 | 72.3 | 5.7 | 5.7 | 12.1 |
| Ռադիո | 1.7 | 1.7 | 71.8 | 3.8 | 6.3 | 14.7 |

- Ֆիզիկական սահմանափակ կարողություն ունեցող անձ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 18.9 | 56.7 | 3.8 | 14.3 | 3.4 | 2.9 |
| Առցանց մամուլ | 18.7 | 56.5 | 3.5 | 16.4 | 3.0 | 1.8 |
| Թերթ | 17.0 | 51.1 | 2.8 | 18.4 | 0.7 | 9.9 |
| Ռադիո | 15.5 | 52.1 | 3.8 | 10.5 | 2.1 | 16.0 |

- Մտավոր սահմանափակ կարողություն ունեցող անձ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 21.4 | 46.9 | 5.2 | 18.1 | 5.3 | 3.1 |
| Առցանց մամուլ | 21.3 | 45.3 | 4.9 | 21.0 | 5.5 | 2.0 |
| Թերթ | 21.3 | 34.8 | 4.3 | 25.5 | 2.8 | 11.3 |
| Ռադիո | 18.5 | 40.3 | 4.6 | 15.5 | 5.0 | 16.0 |

- Համաստեռական

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 5.9 | 1.1 | 77.1 | 9.2 | 3.6 | 3.1 |
| Առցանց մամուլ | 7.6 | 1.8 | 78.4 | 7.8 | 2.6 | 1.7 |
| Թերթ | 3.5 | 1.4 | 74.5 | 5.0 | 5.7 | 9.9 |
| Ռադիո | 6.3 | 0.8 | 66.0 | 5.9 | 5.0 | 16.0 |

- Ձեր քաղաքական հայացքներից տարբեր հայացք ունեցողներ

| | Ե՛վ դրական, և՛ բացասա-կան երանգներով | Հիմնականում դրական երանգներով | Հիմնականում բացասական երանգներով | Չեզոք/ո՛չ դրական, ո՛չ բացասական երանգներով/ | Գրեթե/ ընդհանրապես ներկայացված չեն | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|
| Հեռուստացույց | 41.8 | 17.7 | 12.8 | 22.3 | 1.0 | 4.4 |
| Առցանց մամուլ | 43.0 | 16.3 | 13.1 | 22.2 | 1.7 | 3.7 |
| Թերթ | 42.6 | 9.2 | 9.9 | 24.1 | 0.7 | 13.5 |
| Ռադիո | 36.1 | 9.2 | 11.8 | 24.4 | 2.1 | 16.4 |

## Սոցիալական հարաբերությունների պատրաստակամությունը տարբեր սոցիալական խմբերի հանդեպ

Տարբեր սոցիալական խմբերի հետ հարաբերությունի պատրաստակամությունը չափելու համար կիրառվել է Բոգարդուսի սանդղակը: Սանդղակի էությունը նրանում է, որ հարցվողները նշում են, թե նախապես ամրագրված հարաբերություններից որոնց են պատրաստ տարբեր սոցիալական ծմբերի պարագայում: Ընդ որում, սանդղակում ավելի մոտ հարաբերությունը ընդգրկում է նաև ավելի հեռու հարաբերությունը, այլ կերպ ասած՝ եւ որևէ մեկը պատրաստ է ընկերական հարաբերության տվյալ խմբի ներկայացուցչի հետ, ապա պատրաստ կլինի լինել նաև, օրինակ, նույն պետության բնակիչ: Հենց դրանով է բացատրվում գունավորումը:

Արդյունքում տեսնում ենք, որ ունենք 6 խումբ, որոնց հետ ոչ մի հարաբերության պատրաստ չեն՝ աղանդավոր, թմրամոլ, խաղամոլ, հանցագործ, մարմնավաճառ, համասեռական: Եվս 6 խմբի ներկայացուցիչների հետ հարաբերությունների պատրաստակամությունը շատ թույլ է, ամենահեռացված հարաբերություննն է ցույց տալիս՝ տարբեր երկրների բնակիչ: Դրանք են՝ քուրդ/եզդի, մոլոկան, ադրբեջանցի, թուրք, պարսիկ, մահմեդական: Մնացյալ բոլոր խմբերի պարագայում պատրաստ են ընկերական հարաբերության:

| | Ամուսին/կին | Ընկեր | Հարևան | Գործ-ընկեր | Նույն քաղաքի/գյուղի/շրջանի բնակիչ | Նույն պետու-թյան բնակիչ | Տարբեր երկրնե-րի բնակիչ | Ոչ մի | ԴՊ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ռուս | 6.1 | 43.6 | 11.9 | 17.6 | 3.6 | 3.5 | 11.3 | 1.6 | 0.9 |
| Եվրոպացի | 8.2 | 39.7 | 7.4 | 28.5 | 2.6 | 3.2 | 8.8 | 1.2 | 0.5 |
| Ամերիկացի | 6.1 | 33.6 | 9.1 | 30.0 | 3.2 | 4.5 | 11.0 | 1.7 | 0.8 |
| Սլավոնական ազգի ներկայացուցիչ | 3.5 | 30.0 | 12.7 | 16.0 | 5.4 | 5.0 | 21.6 | 4.0 | 1.7 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քուրդ/եզդի | 0.6 | 19.8 | 17.1 | 7.1 | 9.6 | 12.4 | **21.1** | 10.1 | 2.2 |
| Ասիացի | 3.5 | **25.7** | 11.1 | 19.8 | 5.7 | 6.5 | 22.0 | 3.9 | 1.8 |
| Վրացի | 3.1 | **33.9** | 22.9 | 13.8 | 3.1 | 3.1 | 15.8 | 3.1 | 1.2 |
| Մոլոկան | 0.5 | 14.0 | 15.4 | 7.4 | 9.2 | 15.1 | **24.5** | 10.5 | 3.5 |
| Ադրբեջանցի | 0.1 | 6.3 | 6.2 | 4.0 | 1.8 | 2.2 | **46.6** | 31.2 | 1.6 |
| Թուրք | 0.4 | 8.5 | 6.2 | 5.8 | 1.6 | 2.5 | **45.9** | 27.4 | 1.7 |
| Պարսիկ | 0.9 | 11.9 | 11.8 | 16.6 | 3.0 | 6.9 | **32.6** | 15.4 | 1.0 |
| Սփյուռքահայ | 10.0 | **53.2** | 9.6 | 12.7 | 2.7 | 6.6 | 3.8 | 0.8 | 0.8 |
| Սևամորթ | 4.4 | **35.6** | 7.8 | 13.6 | 4.3 | 5.3 | 20.6 | 6.6 | 1.8 |
| Մահմեդական | 0.8 | 14.2 | 8.0 | 11.9 | 3.0 | 6.3 | **38.3** | 15.5 | 1.8 |
| Քրիստոնեության այլ ուղղության հետևորդ | 4.5 | **28.5** | 12.0 | 9.2 | 8.8 | 13.7 | 13.5 | 7.8 | 2.1 |
| Աղանդավոր | 0.4 | 8.5 | 8.2 | 4.0 | 9.1 | 15.8 | 24.7 | **27.3** | 2.1 |
| Աթեիստ | 3.9 | **27.9** | 9.2 | 7.0 | 8.3 | 12.9 | 12.4 | 16.7 | 1.7 |
| Թմրամոլ | 0.3 | 8.5 | 7.4 | 1.2 | 13.5 | 17.6 | 20.6 | **29.1** | 1.8 |
| Խաղամոլ | 0.3 | 8.0 | 8.8 | 1.6 | 12.9 | 19.4 | 19.4 | **28.5** | 1.2 |
| Հանցագործ | 0.4 | 5.3 | 6.0 | 1.9 | 12.9 | 21.2 | 21.2 | **29.9** | 1.2 |
| Մարմնավաճառ | 0.1 | 2.8 | 4.7 | 0.9 | 12.0 | 22.8 | 22.9 | **32.3** | 1.4 |
| Ֆիզիկական սահմանափակ կարողություն ունեցող անձ | 3.6 | **66.5** | 8.7 | 4.1 | 6.2 | 6.2 | 1.6 | 1.4 | 1.7 |
| Մտավոր սահմանափակ կարողություն ունեցող անձ | 0.6 | **47.0** | 19.3 | 3.1 | 11.1 | 11.6 | 2.3 | 2.5 | 2.5 |
| Համասեռական | 0.0 | 11.1 | 4.3 | 2.3 | 7.0 | 14.1 | 22.9 | **37.0** | 1.3 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ձեր քաղաքական հայացքներից տարբեր հայացք ունեցողներ | 6.7 | **42.6** | 11.4 | 15.5 | 7.0 | 10.5 | 2.6 | 1.7 | 2.1 |

Փորձել ենք նաև դիտարկել, թե արդյոք կա կորելյացիա տարբեր սոցիալական խմբերի՝ մեդիատեսակներում ներկայացվածության և սոցիալական հարաբերությունների պատրաստակամության միջև։ Որոշ սոցիալական խմբերի պարագայում կա կորելյացիա մեդիատեսակներում ներկայացվածության միջև, սակայն բացակայում է կորելյացիան սոցիալական հարաբերությունների պատրաստակամության և ներկայացվածության միջև։ Այդպես է հետևյալ խմբերի պարագայում՝ ռուս, եվրոպացի, ամերիկացի, ադրբեջանցի, աղանդավոր, աթեիստ, մարմնավաճառ, Ձեր քաղաքական հայացքներից այլ քաղաքական հայացք ունեցողներ։

Մի քանի խմբերի պարագայում առկա է կորելյացիա առցանց մամուլի և հեռուստացույցի պարագայում՝ սլավոնական ազգի ներկայացուցիչ, ասիացի, վրացի, մոլոկան, սևամորթ, մահմեդական։ Քուրդ/եզդի, հանցագործ, քրիստոնեության այլ ուղղության ներկայացուցիչ խմբերի պարագայում կա կորելյացիա ոչ միայն հեռուստացույցի և առցանց մամուլի, այլև ռադիոյի պարագայում։ Միայն թերթի հետ կորելյացիա կա սփյուռքահայի պարագայում, թմրամոլի և խաղամոլի պարագայում միայն հեռուստացույցի դեպքում, ինտերնետի պարագայում էլ կորելյացիա կա թուրքի, համասեռականի, ֆիզիկական և մտավոր սահմանափակ կարողություն ունեցողների դեպքում։ Բոլոր մեդիատեսակներում ներկայացվածության և հարաբերությունների պատրաստակամություն կա միայն պարսիկների պարագայում։

## Եզրակացություն

«Սոցիալական երևույթների հանդեպ երիտասարդների դիրքորոշման և այդ դիրքորոշումը պայմանավորող գործոնների ուսումնասիրություն. մեդիայի ազդեցությունը այդ գործոնների ձևավորման վրա» հետազոտության արդյունքները թույլ են տալիս անել հիմնական մի քանի եզրահանգումներ.

- Արժեքները համեմատելու արդյունքում պարզ է դառնում, որ ամենանախընտրելի արժեքը ընտանիքն է, այնուհետև արժանապատվությունը, հարգանքը, ընկերությունը, սերը, ազատությունը և վերջին տեղում՝ աշխատանքը:
- Գաղափարները՝ արժեք կամ ոչ արժեք համարելու դեպքում առաջին եռյակում են «արդարություն», «ազնվություն» և «մարդու իրավունքներ» տարբերակները: Եթե այդ պարագայում առաջին եռյակը ձևավորվել էր ամեն գաղափարի համար ռեսպոնդենտին հարցնելու արդյունքում, թե ըստ իրեն արժեք է, թե ոչ այս կամ այն գաղափարը, ապա դրանից զատ նաև ռեսպոնդենտները առանձնացրել են 3 առաջնահերթ արժեքները իրենց համար: Այս պարագայում առաջին եռյակում են «ազնվություն», «արդարություն», «հարազատներ» պատասխանները: Հետաքրքիր է, որ «մարդու իրավունքներ»-ը, չնայած նրան, որ շատ մեծ քանակությամբ ռեսպոնդենտների մոտ արժեք է, նրանք այն առաջնահերթ արժեքների շարքում համեմատաբար քիչ են դասել, իսկ գրեթե նույնքանակ «հարազատներ» նշողների շատ մեծ մասին համար այն առաջնահերթ արժեք է:
- Սոցիալական հարաբերությունների պատրաստակամությունը դիտարկելիս ի հայտ են գալիս 6 խումբ, որոնց հետ ուսանողները ոչ մի հարաբերության պատրաստ չեն՝ աղանդավոր, թմրամոլ, խաղամոլ, հանցագործ, մարմնավաճառ, համասեռական: Եվս 6 խմբի ներկայացուցիչների հետ հարաբերությունների պատրաստակամությունը շատ թույլ է, ամենաhեռացված հարաբերությունն է ցույց տալիս՝ տարբեր երկրների բնակիչ: Դրանք են՝ քուրդ/եզդի, մոլոկան, ադրբեջանցի, թուրք, պարսիկ, մահմեդական: Մնացյալ բոլոր խմբերի պարագայում պատրաստ են ընկերական հարաբերության:

- Որոշ սոցիալական խմբերի պարագայում կա կորելյացիա մեդիատեսակներում ներկայացվածության միջև, սակայն բացակայում է կորելյացիան սոցիալական հարաբերությունների պատրաստակամության և ներկայացվածության միջև: Այդպես է հետևյալ խմբերի պարագայում՝ ռուս, եվրոպացի, ամերիկացի, ադրբեջանցի, աղանդավոր, աթեիստ, մարմնավաճառ, Ձեր քաղաքական հայացքներից այլ քաղաքական հայացք ունեցողներ: Մի քանի խմբերի պարագայում առկա է կորելյացիա առցանց մամուլի և հեռուստացույցի պարագայում՝ սլավոնական ազգի ներկայացուցիչ, ասիացի, վրացի, մոլոկան, սևամորթ, մահմեդական: Քուրդ/եզդի, հանցագործ, քրիստոնեության այլ ուղղության ներկայացուցիչ խմբերի պարագայում կա կորելյացիա ոչ միայն հեռուստացույցի և առցանց մամուլի, այլև ռադիոյի պարագայում: Միայն թերթի հետ կորելյացիա կա սփյուռքահայի պարագայում, թմրամոլի և խաղամոլի պարագայում միայն հեռուստացույցի դեպքում, ինտերնետի պարագայում էլ կորելյացիա կա թուրքի, համասեռականի, ֆիզիկական և մտավոր սահմանափակ կարողություն ունեցողների դեպքում: Բոլոր մեդիատեսակներում ներկայացվածության և հարաբերությունների պատրաստակամություն կա միայն պարսիկների պարագայում: